ԳԼՈԲՈՒՍ

Հրատարակվում է
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աջակցությամբ

5 (94)

ԵՐԵՎԱՆ

2018

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 5 (94), 2018

«ԳԼՈԲՈՒՍ» ՏԵՂԵԿԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշոտ Թավադյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Աշոտ Թևիկյան
«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, տ.գ.թ.

Արա Մարջանյան
«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, տ.գ.թ., ա.գ.ա.

Գագիկ Հարությունյան (համակարգող)
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Կարեն Վ.Կարապետյան
Տնտեսագիտության դոկտոր

Մուշեղ Լալայան
ՀՀԿ փոխնախագահ

Սամվել Մանուկյան
«Նորավանք» ԳԿՀ ավագ փորձագետ, ս.գ.թ.

Վահագն Ազլյան
«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան
Տնտեսական գիտությունների թեկնածու

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր
Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի տեղակալ
Արա Մարջանյան

Պատասխանատու խմբագիր
Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու քարտուղար
Լուսինե Բաղրամյան

Խմբագիրներ
Արեստակես Սիմավորյան
Դիանա Գալստյան
Կարեն Վերանյան
Սամվել Մանուկյան
Վահագն Ազլյան
Վահրամ Հովյան

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 5 (94), 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դիանա Գալստյան
Նախիջևանի թեման ադրբեջանական լրատվադաշտում.
որոշ դիտարկումներ 4

Անդրանիկ Հովհաննիսյան
«Եվրասիա» ջրանցքի ռազմավարական առանձնահատկությունները
տարածաշրջանային անվտանգության շրջանակներում 11

Արմեն Մանվելյան
Հեղուկացված գազը և էներգետիկ աշխարհաքաղաքական
փոփոխությունները 17

Կարեն Վերանյան
Իսրայելի կրիտիկական ենթակառուցվածքները.
գիտատեխնոլոգիական ոլորտ 22

Վահրամ Հովյան
ԱՄՆ հայկական բարեգործական կազմակերպությունները.
որոշ դիտարկումներ 30

Խաչատուր Խաչատրյան, Մարատ Բաղդասարյան
Բանակի կառավարման առանձնահատկությունների
գերմանական օրինակը 35

ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԹԵՄԱՆ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՎԱԴԱՇՏՈՒՄ. ՈՐՈՇ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Դիանա Գալստյան*

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել Նախիջևանի (Նախիջևանի Ինքնավար Հանրապետություն, ՆԻՀ) ներկայացվածությունն ադրբեջանական մեդիա-դաշտում շրջանառվող տեղեկատվական հոսքերում, պարզել այն հիմնական համատեքստերը, որտեղ հանդես է եկել Նախիջևանը: Այդ նպատակով դիտարկվել են ադրբեջանական *1news.az, day.az, haqqin.az* լրատվական կայքերի և *Interfax.az* գործակալության ադրբեջանական բաժնի («*Интерфакс-Азербайджан»)*[1] Նախիջևանին առնչվող նյութերը 2017թ. հունվար - 2018թ. մայիս ժամանակահատվածում:

Թեմատիկ նյութերում, բացի «Նախիջևան» (ադրբեջանական տեքստերում՝ *Нахчыван*), «Նախիջևանի Ինքնավար Հանրապետություն» ձևակերպումից, օգտագործվել են նաև հետևյալ ձևակերպումները՝ *«ադրբեջանական պատմական շրջան»*, «*ինագույն ադրբեջանական հող», «պատմական վայր», «հնագույն քաղաքակրթության բնօրրան», «արագ տեմպերով զարգացող Նախիջևանի ԻՀ», «ռազմավարական նշանակության դիրք ունեցող Նախիջևան»* և այլն:

Դիտարկված ժամանակահատվածում Նախիջևանին առնչվող նյութերում գերակշռել են տեղեկատվական բնույթի, պաշտոնական լրահոսի նյութերը, որոնք պայմանականորեն խմբավորել ենք ըստ ոլորտների հետևյալ կերպ.

---

* «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի ղեկավարի տեղակալ:

[1] 1news.az-ը, day.az-ն ընտրվել են որպես ադրբեջանական հիմնական լրատվական կայքեր, haqqin.az-ը՝ ըստ լսարանի վրա ունեցած ազդեցության, Interfax.az–ը՝ որպես տարածաշրջանային լրատվական գործակալություն:

- *Ռազմական ոլորտի* վերաբերյալ նյութեր (մասնավորապես՝ տարբեր զորավարժությունների, նոր զորամասի բացման մասին, զինատեսակների ձեռքբերման, ուժի ցուցադրության միջոցառումների մասին նյութեր)։ Այստեղ ընդգրկված են նաև սահմանային իրավիճակին վերաբերող նյութեր։
- *Տնտեսական և էներգետիկ* թեմաներով նյութեր, մասնավորապես՝ ներկայացվել է այդ ոլորտներում գրանցված առաջընթացը։
- *Պաշտոնական այցեր։* Ադրբեջանի և այլ երկրների պաշտոնատար անձանց (օրինակ՝ Իրանի արտգործնախարարի, Թուրքիայի վարչապետի) այցերի մասին նյութեր։
- *Նախիջևանում տեղի ունեցող իրադարձությունների* մասին կարճ, տեղեկատվական բնույթի նյութեր։ Հիմնականում այդ նյութերն առնչվում են նոր հուշարձանների, թանգարանների, նոր կառուցված դպրոցների, հիվանդանոցների բացմանը և այլն։

Ինչպես տեղեկատվական նյութերը, այնպես էլ Ադրբեջանի նախագահի՝ այցելությունների ժամանակ ունեցած ելույթները քարոզչական բնույթ են կրում, որոնք լսարանին ներկայացնում են «*Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը՝ որպես արագ տեմպերով զարգացող, ռազմական ներուժ ունեցող, տնտեսական զարգացման տեսանկյունից առաջընթաց գրանցած, ծաղկման շրջանում գտնվող ինքնավար հանրապետություն»։* Նախիջևանի վերաբերյալ տեղեկատվական նյութերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ տարբեր ոլորտների իրադարձությունները լուսաբանվում են միայն դրական երանգավորմամբ, դիտարկված ժամանակահատվածում չեն հանդիպել Նախիջևանում առկա խնդիրների մասին նյութեր։ Որպես ՆԻՀ միակ խնդիր ներկայացվել է «*հայերի կողմից իրականացվող շրջափակումը, որը, սակայն, խոչընդոտ չի հանդիսանում զարգացման համար, և շուտով այդ հարցն էլ լուծում կստանա»*[2]։

[2] Ըստ ադրբեջանական աղբյուրների՝ այժմ ընթանում է Հյուսիս-Հարավ տրանսպորտային միջանցքի շինարարությունը, որը նախատեսվում է շահագործման հանձնել 3 տարվա ընթացքում, ինչը հնարավորություն կտա Նախիջևանին ցամաքային կապ ունենալ Ադրբեջանի հետ, https://news.day.az/politics/1005611.html

Ուսումնասիրված նյութերի վերլուծության արդյունքում փորձել ենք առանձնացնել նաև իմաստային այն հիմնական համատեքստերը, որտեղ ներկայացվել է Նախիջևանը: Դրանք հետևյալն են.

- *«Նախիջևանը որպես հնագույն քաղաքակրթության բնօրրան»:* Այն կապված է Նոյի (ադրբեջանական տեքստերում՝ «*Hyx*» - «Նուխ») և համաշխարհային ջրհեղեղի հետ: Այս համատեքստում ադրբեջանական լրատվամիջոցներում պարբերաբար հայտնվում են անցկացված միջոցառումների, հրատարակված գրքերի մասին տեղեկություններ (ինչպես, օրինակ, վերջերս տեղի ունեցած Աղի թանգարանի և Նոյի արձանի բացման արարողության կամ մայիսի 21-24-ին «*Նախիջևանը քաղաքակրթության բնօրրան*» խորագրով 4-րդ միջազգային գեղարվեստական փառատոնի անցկացման մասին տեղեկությունները):
- *«Նախիջևանը որպես բնիկ ադրբեջանական հող»*: Ադրբեջանական տեքստերում Նախիջևանը ներկայացված է որպես «*Ադրբեջանի անքակտելի մաս, որի նկատմամբ հայերը հավակնություններ ունեն»:* Սա, ըստ էության, կապ ունի նախորդի հետ: Ադրբեջանական քարոզչությունը նպատակ է հետապնդում ապացուցել, որ «*Ադրբեջան պետությունը» և «ադրբեջանցի ժողովուրդը» դարերի պատմություն ունեն*:
- *Նախիջևանը որպես հարուստ մշակութային ժառանգության կենտրոն (հուշարձաններ, գորգեր):* Այս համատեքստում որպես ադրբեջանական մշակութային ժառանգություն ներկայացված է ինչպես իսլամական, այնպես էլ քրիստոնեական մշակութային ժառանգությունը: Ընդ որում, հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգությունը՝ Նոր Ջուղայի գերեզմանատան խաչքարերը (ադրբեջանական տեքստերում՝ խաչդաշ), վերագրվում են Կովկասյան Աղվանքի ժողովրդին՝ դրանց հետագա ադրբեջանականացումը հիմնավորելու համար[3]: Քրիստոնեական և իսլամական հուշարձանների գոյու-

[3] Հատկապես ուշագրավ են Արևելյան Անդրկովկասի բնիկ ժողովուրդների (հայեր, դաղստանալեզու և պարսկալեզու ազգություններ) պատմամշակութային ժառանգության և տարածքների ալբանական-նախաադրբեջանական պատկանելության մասին հակագիտական պատմաքաղաքական հայեցակարգի հորինումն ու տարածումը («Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը», «Նորավանք» ԳԿՀ, 2009թ., էջ 29):

թյան հանգամանքը Նախիջևանում Ադրբեջանը վերջին տարիներին օգտագործում է նաև «*մուլտիկուլտուրալիզմի (բազմամշակութայնության) ադրբեջանական մոդելի*» շուրջ կառուցվող քարոզչությունում՝ անվանելով այն «*մուլտիկուլտուրալիզմի լաբորատորիա*»:

- *Նախիջևանը որպես արագ տեմպերով զարգացող ինքնավար հանրապետություն:* Այս համատեքստում ներկայացվում են վերջին տարիներին գրանցված հաջողությունները: Որպես փաստարկ բերվում է ադրբեջանական *Caspian Energy International Media Group*-ի կողմից պատրաստված՝ Ադրբեջանի տարբեր շրջանների տնտեսական ներդրումների վերաբերյալ ամենամյա վարկանիշային զեկույցը, որը 2017թ. գլխավորել է ՆԻՀ-ը:
- *Նախիջևանը որպես զբոսաշրջության զարգացման կենտրոն:* Նախիջևանի՝ որպես զբոսաշրջության կենտրոնի մասին նյութերում գերակշռել են հիմնականում բժշկական և կրոնական տուրիզմի վերաբերյալ նյութերը:

Մյուս կողմից՝ վերջին տարիներին ներքին քարոզչության, լրատվամիջոցների վերահսկողության ուժգնացումն Ադրբեջանում, որոշ փորձագետների կարծիքով, առավել խստորեն արտահայտվել է Նախիջևանում: Իրավապաշտպան Մալախաթ Նասիբովայի[4] կարծիքով՝ «*Նախիջևանը այն վայրն է, որտեղ մշակվում են բռնաճնշումների մեթոդները, իսկ այնուհետև դրանք տարածվում են Ադրբեջանի ողջ տարածքում: Օրինակ՝ Նախիջևանում մարդուն կարող են ազատազրկման դատապարտել իր իրավունքները պաշտպանել ցանկանալու համար, իսկ այլախոհության, ավելորդ ակտիվության համար կարող են նաև հոգեբուժա-*

[4] Իրավապաշտպան և լրագրող Մալախաթ Նասիբովան և նրա ամուսինը՝ Իլգար Նասիբովը, 2002թ. հիմնեցին «Դեմոկրատիայի և ՀԿ զարգացման ռեսուրս» կենտրոնը, թեև իշխանություններն ամեն կերպ խոչընդոտում էին այդ կենտրոնի գործունեությանը: 2003թ. Մ.Նասիբովան աշխատանքի անցավ նաև «Ազատություն» ռադիոկայանում՝ որպես Նախիջևանի թղթակից: Իրենց աշխատանքային գործունեության հետևանքով ամուսինները պարբերաբար հետապնդումների, ֆիզիկական և հոգեբանական ճնշումների էին ենթարկվում: 2014թ. Իլգար Նասիբովի վրա կատարված հարձակումից հետո իրավապաշտպան ամուսինները միջազգային կազմակերպությունների օգնությամբ բնակություն հաստատեցին Նորվեգիայում, http://m.kavkaz-uzel.eu/articles/185626/?full_page=true; https://haqqin.az/news/121467

ման ուղարկել: Այս մեթոդը մասնավորապես կիրառվում է Նախիջևանում տեղի ունեցող կարևոր իրադարձությունների, պաշտոնատար անձանց այցելությունների ժամանակ»[5]:

Տարբեր փորձագետներ և իրավապաշտպաններ փաստում են, որ Նախիջևանում չկան անկախ կամ մասնավոր լրատվամիջոցներ: ՆԻՀ-ում գործում են 2 հեռուստաընկերություն (*Naxçıvan Dövlət Televizyası* - Նախիջևանի Ինքնավար Հանրապետության պետական հեռուստաալիք և «*Канал 35*»[6]), 2 ռադիոկայան (*«Naxcivan Dövlət Radiosu» - Նախիջևանի պետական ռադիո*, «*Naxçıvanın səsi*» - «Նախիջևանի ձայն») և 9 թերթ («*Şərq qapısı*» - «Արևելքի դարպասներ»[7], «*Sərurun Sesi*» - «Շարուրի ձայնը», «*Yeni Hayat*» - «Նոր կյանք» և այլն), ինչպես նաև 2018թ. ապրիլին գործարկված *Nuhcixan.az.* լրատվական գործակալությունը, որոնք պետական են: Թերթերի հիմնադիրներ և ղեկավարներ են հանդիսանում ՆԻՀ տարբեր շրջանների գործադիր մարմինները:

Այս հանգամանքը հաշվի առնելով՝ կարող ենք ասել, որ լրատվամիջոցները գտնվում են ՆԻՀ իշխանությունների տոտալ վերահսկողության տակ, և նման պայմաններում լսարանին մատուցվում է միայն իշխանությունների համար ցանկալի ինֆորմացիան:

Նախիջևանի վերաբերյալ տեղեկատվության համար որպես այլընտրանքային աղբյուր մեր կողմից ուսումնասիրվել են նաև միջազգային կազմակերպությունների տարբեր տարիների զեկույցները, ադրբեջանցի և արտասահմանցի իրավապաշտպանների հոդվածները և հարցազրույցները[8]: Նշված նյութերն առնչվում են 2009-2014թթ., քանի որ ավելի թարմ տեղեկատվությունը բացակայում է: Դա պայմանավորված է վերջին տա-

[5] Нахичеван – полигон для подавления демократических свобод, http://m.kavkaz-uzel.eu/articles/185626/?full_page=true

[6] «Канал 35»-ը համարվում է մասնավոր հեռուստաընկերություն, սակայն տեղեկությունների համաձայն՝ այն պատկանում է ՆԻՀ Գերագույն մեջլիսի ղեկավար Վասիֆ Թալիբովի եղբորը: ՆԻՀ մեջլիսի տպագիր օրգան:

[7] Азербайджан: Независимые журналисты в тяжёлом положении, https://amnesty.org.ru/sites/default/files/az_eur550042009rus.pdf

[8] Свобода медиа в странах Восточного партнерства-2013 http://ypc.am/wp-content/uploads/2015/03/EaP-Media-Freedom-Landscape-2013_RU.pdf

րիներին Ադրբեջանում, նաև Նախիջևանում միջազգային լրատվամիջոցների և կազմակերպությունների աշխատանքների խոչընդոտման հանգամանքով[9]:

Հելսինկյան կոմիտեի Նախիջևանին նվիրված զեկույցում[10] (2009թ.) այն անվանվում է «*Ադրբեջանի սև կղզի*»: Այդ նյութերում Նախիջևանը ներկայացվում է որպես բազմաթիվ խնդիրներ, ավտորիտար ռեժիմ ունեցող ինքնավար հանրապետություն, որտեղ չկան անկախ լրատվամիջոցներ, ոտնահարվում են մարդու իրավունքները, որտեղ հետապնդվում են ընդդիմադիր և այլախոհական գործիչները: Արգելված են իշխանությունների վերաբերյալ քննադատական բովանդակությամբ հոդվածների հրապարակումը, հանրային ելույթները, խստորեն վերահսկվում է Ադրբեջանի այլ հատվածներում հրատարակված ընդդիմադիր բովանդակությամբ թերթերի տարածումը:

Զեկույցում անդրադարձ է կատարվում նաև ՆԻՀ տնտեսական ոլորտում Գերագույն մեջլիսի ղեկավար Վասիֆ Թալիբովի և նրա մերձավորների մենաշնորհային դիրքերին և սահմանած վերահսկողությանը:

minval.az կայքում զետեղված հոդվածում[11] Յանա Մադաթովան Վ.Թալիբովին համեմատել է Հս. Կորեայի ղեկավար Կիմ Չեն Ընի հետ՝ վկայակոչելով տարբեր ոլորտներում կիրառվող վերահսկման մեխանիզմները և արգելքները (օրինակ՝ պետաշխատողները պարտադիր կերպով պետք է մասնակցեն շաբաթօրյակներին, հակառակ դեպքում կհեռացվեն աշխատանքից): Բացի պետաշխատողների համար նախատեսված հագուստից, ուսուցիչները, տաքսու վարորդները նույնպես պետք է կրեն հատուկ համազգեստներ: Արգելվում է օգտագործել համաշխարհային տեխնիկայի և հագուստի հայտնի ապրանքանիշերի անվանումները:

[9] Օրինակ, Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնը (ՀՌԿԿ), որը Հարավային Կովկասի երկրներում 2004-ից ի վեր իրականացնում է հանրային կարծիքի հետազոտություններ, 2013թ. սկսած՝ հետազոտություն է անցկացնում միայն Վրաստանում և Հայաստանում:

[10] Azerbaijan's Dark Island: Human Rights Violations in Nakhchivan http://nhc.no/no/publikasjoner/rapporter/Azerbaijan%27s+Dark+Island%3A+Human+Rights+Violations+in+Nakhchivan.9UFRvI45.ips

[11] Հոդվածն այժմ հասանելի չէ minval.az կայքում: https://www.panorama.am/ru/news/2014/03/08/nakhichevan-tabu/335638

Վերջին շրջանում այդպիսի հրամանների օրինակ է Վ.Թալիբովի 2017թ. օգոստոսի 29-ի հրամանով սահմանված պարտադիր ընթերցանության գրքերի ցանկը[12]: 2017թ. նոյեմբերին ՆԻՀ նախարարների կաբինետը սահմանեց գերեզմանաքարերի տեղադրման նոր կարգ, որի համաձայն՝ պետք է տեղադրվեն միանման գերեզմանաքարեր, արգելվեց «ճոխ» գերեզմանաքարերի տեղադրումը[13]:

Յ.Մադաթովայի հոդվածում նշվում էր, որ Նախիջևանում արգելված է տեղի ռադիո- և հեռուստատեսության եթերով արտասահմանյան երաժշտության հեռարձակումը: Նշենք նաև, որ մեր կողմից կատարված՝ ադրբեջանական հեռուստաալիքների ծրագրային ցանցի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ՆԻՀ պետական հեռուստաընկերության եթերով չեն հեռարձակվում արտասահմանյան երաժշտություն, սերիալներ, սիթքոմներ[14]: Նախապատվություն է տրվում ազգագրական հաղորդումներին, դասական և ժողովրդական երաժշտությանը, ինչպես նաև ադրբեջանական արտադրության ֆիլմերին:

Փաստորեն, Նախիջևանի՝ ադրբեջանական լրատվամիջոցների կողմից հետևողականորեն ստեղծված պատկերը բավական տարբերվում է այլընտրանքային աղբյուրների նյութերում ներկայացված պատկերից:

Այսպիսով, Նախիջևանի մասին ադրբեջանական հրապարակումների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ սա թեմա է, որի շուրջ ադրբեջանական քարոզչամեքենան կառուցում է իր տեղեկատվական քաղաքականությունը՝ ուղղված թե՛ ներքին, թե՛ արտաքին լսարաններին: Ամփոփելով նշենք, որ դիտարկված ադրբեջանական լրատվամիջոցներն Ադրբեջանի պետության հզորության և ադրբեջանական բանակի ռազմական գերիշխանության տեսակետների ամրագրման տրամաբանությամբ առաջ են տանում նաև Նախիջևանի՝ որպես Ադրբեջանի անքակտելի մասի, տնտեսական զարգացման և ռազմական պոտենցիալի հզորացման քարոզչությունը:

[12] https://haqqin.az/news/109211

[13] http://www.1news.az/news/mogily-v-nahchyvane-budut-vyglyadet-tak---foto

[14] *Ս.Մանուկյան, Դ.Գալստյան,* «Մշակութային-լուսավորչական-դաստիարակչական հաղորդումները Հայաստանի և Ադրբեջանի հիմնական հեռուստաալիքներում», http://noravank.am/upload/pdf/Manukyan_Galstyan_Globus_3_2018.pdf

«ԵՎՐԱՍԻԱ» ՋՐԱՆՑՔԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Անդրանիկ Հովհաննիսյան[*]

Վերջին 10-15 տարում աշխարհում տեղի են ունենում փոփոխություններ, որոնք ուղղված են նոր աշխարհակարգի՝ անբևեռ աշխարհի ձևավորմանը: Ակնհայտ է, որ առանց այս գլոբալ փոփոխությունները հաշվի առնելու դժվար կլինի հասկանալ, թե ինչ է իրականում կատարվում Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում: Հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում են գտնվում ՀԱՊԿ և ԵԱՏՄ շրջանակներում Հայաստանի Հանրապետության ռազմական և տնտեսական դաշնակից պետությունները՝ Ղազախստանը, Ղրղզստանը և Տաջիկստանը:

2018թ. մայիսի 14-ին Սոչիում՝ ԵԱՏՄ երկրների գագաթաժողովում, Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևը հայտարարեց Սև և Կասպից ծովերի միջև «Եվրասիա» ջրանցքի շինարարության հնարավորության մասին: Գաղափարը նոր չէ, և ինչպես արտահայտվեց ինքը՝ Նազարբաևը, «դրա մասին խոսում էին դեռ ցարի ժամանակ»[1]: Առաջին անգամ ԵԱՏՄ երկրների ինտեգրման պայմաններում մեծամասշտաբ ջրանցքի շինարարության մասին Ն.Նազարբաևը հայտարարել էր 11 տարի առաջ՝ 2007թ.: Խորհրդանշական էր, որ հենց այդ տարի Ռուսաստանի տարածքում ջրուղիների ընդլայնման կարևորության մասին հայտարարեց նաև ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը՝ որպես տարբերակ առաջարկելով Վոլգա-դոնյան ջրանցքի արդիականացումը: 2009թ.

---

[*] «Նորավանք» ԳԿՀ փորձագետ:

[1] *ՍաֆարյանԱ.*, «Եվրասիա» նոր ջրանցք կառուցելու Ղազախստանի նախագահի առաջարկը, http://www.azg.am/AM/2018060117, 05.06.2018

Եվրասիական զարգացման բանկը (*EDB*) $2.7 մլն էր հատկացրել Կասպից և Ազովի-Սև ծովերի ավազանի նոր ջրային տրանսպորտի ստեղծման հնարավորությունն ուսումնասիրելու համար, սակայն ուսումնասիրության արդյունքները դեռևս չեն հրապարակվել:

Ղազախստանի նախագահ Ն.Նազարբաևի կողմից առաջարկվող ջրային ուղին, օրինակ, 1000 կիլոմետրով կարճ է ռուսաստանցիների առաջարկածից, ընդ որում, «Եվրասիա» ջրանցքն ի վիճակի է բաց թողնել շատ ավելի բեռներ, քան ռուսաստանյանը՝ մինչև 45 մլն տոննա տարեկան[2]: Այժմ Աստանան նավթի և գազի համարյա 70%-ն առաքում է դեպի Սև ծով Ռուսաստանով՝ Թենգիզ-Ատըրաու-Աստրախան-Նովոռոսիյսկ խողովակաշարային կոնսորցիումի միջոցով, բայց այդ նավթատարի ենթակառույցները բարդացնում են գազի և նավթի արտահանումը, որովհետև բավականաչափ հնացել են:

Ավելի մանրամասն անդրադառնանք «Եվրասիա» նախագծի կրիտիկական ենթակառուցվածքներին: Սույն նախագիծը պետք է դիտարկել տարածաշրջանի ռազմավարական առանձնահատկության տեսանկյունից: Միանշանակ, «Եվրասիա» ջրանցքն անմիջապես կապ ունի վերջին տարիներին ռուս-չին-ղազախստանյան տնտեսական համագործակցության ակտիվ զարգացման հետ: Ինչպես նշեցինք, «Եվրասիա» ջրանցքի նախագծի իրականացումը պետք է դիտարկել տարածաշրջանի անվտանգության տեսանկյունից: Այս համատեքստում նշենք տարածաշրջանային և համաշխարհային դերակատարների ռազմավարական առանձնահատկություններն ու շահերը Կենտրոնական Ասիայում:

Թուրքիա և Իրան. Խորհրդային շրջանի ավարտից հետո համաշխարհային շատ տերություններ «աչք դրեցին» աշխարհառազմավարական առումով խիստ կարևոր այս տարածաշրջանի վրա՝ ձգտելով իրենց հսկողության տակ վերցնել նաֆթն ու գազը: Միջազգային ասպարեզի այնպիսի դերակատարներ, ինչպիսին են Թուրքիան և Իրանը, աշխատեցին օգտվել տարածաշրջանի հետ իրենց մշակութային և պատմական կապերից, որպեսզի հաստատեն սեփական ներկայությունը Կենտրոնա-

[2] Նույն տեղում:

կան Ասիայում: Սակայն Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Չինաստանի ճնշումը խափանեց այդ փորձը:

ՀՀ ազգային անվտանգության տեսանկյունից հարկ է շեշտել, որ Թուրքիայի գործոնի ուժեղացումը Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում կխթանի նաև պանթուրքական գաղափարախոսությունը, որը վտանգավոր է ոչ միայն Հայաստանի, այլ նաև ՌԴ-ի, Իրանի և Չինաստանի համար: Օրինակ, Իրանի պարագայում կարևորվում է այն հանգամանքը, որ այդ երկրում առկա է «Իրանական Ադրբեջան» հասկացությունը, որտեղ հոծ բնակություն է հաստատել Իրանի թյուրքախոս բնակչությունը, և Թուրքիայի ու Ադրբեջանի միջոցով անջատողական որոշակի գործընթացներ կարող են ծավալվել: Ռուսաստանի հարավում և Պովոլժիեում իսլամական և թյուրքախոս ինքնավարություններ են հաստատվել, որոնցում կրկին Անկարայի և Բաքվի միջոցով հնարավոր են ծայրահեղ իսլամիստական ու պանթուրքիստական տրամադրությունների ակտիվացումն ու տարածումը՝ Ռուսաստանի համար ստեղծելով նոր ներքին պատերազմի օջախներ: Այս խնդիրը չի անտեսում նաև Չինաստանը: ՉԺՀ հյուսիսարևմտյան նահանգները խիտ բնակեցված են թյուրքալեզու ույղուրներով:

Միացյալ Նահանգներ և ՆԱՏՕ. 1990-2000-ական թթ. Կասպյան տարածաշրջանը ԱՄՆ արտաքին քաղաքականության և Հյուսիսատլանտյան դաշինքի ավանգարդում էր գտնվում: Վաշինգտոնն ակտիվորեն ներգրավված էր տարածաշրջանային քաղաքական գործընթացներում: ԱՄՆ-ը Կասպիական տարածաշրջանը սահմանել էր եվրատլանտյան միասնության միաձուլման գոտի ստեղծելու նպատակ: Այդ գոտին սկսվում էր Վրաստանի Սև ծովի ափից և ավարտվում Ղազախստանի արևելյան սահմաններին: Այս տարածքի վերահսկողությունը (որն ամերիկյան ակադեմիական միջավայրում սովորաբար կոչվում է «Մեծ Կասպիական» - *Большой Каспий*[3]), ԱՄՆ-ին նշանակալի առավելություններ կապահովեր Կենտրոնական Ասիայում և կուժեղացներ Վաշինգտոնի ազդեցությունը համաշխարհային էներգետիկ շուկայում: Սակայն ներկա փուլում «Մեծ

[3] *Свиточ А.,* Большой Каспий. Строение и история развития, Москва, МГУ, 2014, с. 54.

Կասպիական» տարածաշրջանում հաստատված հավասարակշռության համաձայն՝ Միացյալ Նահանգները և ՆԱՏՕ-ն Ռուսաստանի և Իրանի կողմից լիովին դուրս են մղվել Կասպից ծովի արևմտյան և արևելյան ափերից[4]: Հետևաբար, ԱՄՆ-ը ներկա փուլում ստիպված է հետևել «բաց թողնված հնարավորությունների» ռազմավարությանը՝ տարածաշրջանում առնվազն նվազագույն ներկայություն պահպանելու համար:

«Արջի և կարմիր վիշապի» միջև ռազմավարական պայքարը. Ակնհայտ է, որ Ռուսաստանն իր հսկողության տակ է վերցրել տարածաշրջանի պետությունների անվտանգության հարցը (տե՛ս *Աղյուսակ 1*): Պեկինը ձգտում է հսկողություն սահմանել տարածաշրջանի էներգետիկ պաշարների վրա, որը «սպառնալիք» է դառնում Մոսկվայի համար՝ խանգարելով վերջինիս խաղալ իր կարևորագույն դերը Կենտրոնական Ասիայում:

Աղյուսակ 1

Ասիայում գործող ռուսական ռազմակայանների ցանկը[5], 2018թ.

Ղազախստան	*Ղրղզստան*	*Տաջիկստան*
Սարը-Շահան, ՌՀՊ և ՀՊ	Կանտ, ավիաբազա	Կուրգան-Թյուբե, 201-րդ ՌԴ ռազմաբազա
Պրիոզյորսկ, ռադիոտեխնիկական համակարգեր	Կարակյոլ, 954-րդ ՌԴ ռազմաբազա	Նուրեկ, «Պատուհան» օպտիկաէլեկտրոնային համալիր
Ժանակազան, 20-րդ ՌՆՀԶ	«Մարևո» նավատորմի 338-րդ կապի կենտրոն	Դուշանբե, ՌԴ ԱԴԾ սահմանապահ ծառայություն
Կարագանդա, 171-րդ ԱՀԳ	Կարա-Բալտա, ՌՆՀԶ	

Չնայած 2014թ. մայիսի 29-ին պայմանագիր ստորագրվեց, որի համաձայն՝ հիմնադրվեց ԵԱՏՄ-ն, Պեկինն իր «տնտեսական էքսպանսիայի» (տե՛ս *Աղյուսակ 2*) քաղաքականության հիման վրա շարունակում է

[4] *Зона, свободная от НАТО: Каспий сдался РФ*, https://www.pravda.ru/authored/06-12-2017/1358605-kaspiy-0/, 12.05.2018.

[5] *Российские войска за рубежом,* http://www.kommersant.ru/ImagesVlast/Vlast/, 16.05.2018.

աջակցել տեղական կառավարություններին, որպեսզի նրանք «դուրս գան» Մոսկվայի հսկողությունից և անցնեն իր թևի տակ: Սակայն Մոսկվան չի կարող թույլ տալ, որ իրեն դուրս մղեն մի տարածաշրջանից, որտեղ պատմականորեն և ներկա փուլում այդքան կարևոր դիրք է զբաղեցնում:

Աղյուսակ 2

Չինաստանի արտահանման մասնաբաժինը Կենտրոնական Ասիայի երկրներում, 2016թ.[6]

Ղրղզստան	*Տաջիկստան*	*Ղազախստան*	*Ուզբեկստան*	*Թուրքմենստան*
67.9%	53.1%	27.7%	21.9%	7.1%

Հաշվի առնելով հետընթացը՝ պետք է նշել, որ Պեկինի այս մոտեցումը Կենտրոնական Ասիայում նոր չէ: Եթե ռուսական պետությունը Կենտրոնական Ասիայի էթնոսների և խանությունների հետ առաջին անգամ շփումներ է հաստատել XVI դարի սկզբում, իսկ այդ ժողովուրդների անցումը Ցարական Ռուսաստանի ազդեցության տակ տեղի ունեցավ միայն 2 -3 դար հետո՝ XVIII-XIXդդ., ապա չինացիների առաջին շփումներն այդ էթնոսների հետ կատարվել են դեռևս Խան Թագավորության ժամանակներում (մ.թ.ա. VIդ.): Ավելին, «սինոկենտրոնացման» աշխարհայացքի համաձայն՝ տարածաշրջանի «քոչվոր ժողովուրդները» մինչև այժմ «Չինական աշխարհի» (*Pax Sinica*)[7] անբաժանելի մաս են համարվում:

Հետևություններ

- «Եվրասիա» ջրանցքի նախագծի իրականացումն առաջին հերթին կուժեղացնի Ռուսաստանի և Ղազախստանի տարածաշրջանային դիրքերը;
- Ըստ «*Sinohydro*»-ի իրականացրած հետազոտության արդյունքների, ջրանցքը կարող է դառնալ չինական բեռնափոխադրումների կարևոր ուղի: Նոր տրանսպորտային ուղին թույլ կտա կրճատել ճանապարհի վրա ծախսվող ժամանակն ու բեռնափոխադրման ծախսերը;

[6] *The Atlas of Economic Complexity,* http://atlas.cid.harvard.edu/explore/, 15.05.2018.
[7] 馬衛東, 中道網, 中國古代三大治世的歷史成因, 13.05.2018.

- «Եվրասիա» ջրանցքի կառուցման գաղափարն ակտիվ քննադատվում է բնապահպանների կողմից: Դա ձեռնտու է Թեհրանին, որն այլընտրանքային նախագիծ ունի՝ միավորել Սև ծովն ու Պարսից ծոցը և օգտագործել դա «Մեկ գոտի՝ մեկ ճանապարհ» չինական ծրագրի շրջանակներում;
- Վաշինգտոնը նույնպես բացասաբար է արձագանքել այս նախագծին, քանի որ այն մեծացնում է ՉԺՀ և Ռուսաստանի տնտեսական ու քաղաքական դերը ոչ միայն Կենտրոնական Ասիայում, այլ նաև Եվրոպայում, որը Մոսկվայի և Պեկինի ապրանքների և ծառայությունների մատակարարման նպատակն է;
- «Եվրասիա» նախագծին դրական կարձագանքեն Անկարայում և Բաքվում, որովհետև Ղազախստանի Կասպյան նավահանգիստների արդիականացումը կնպաստի Աստանայի և Բաքվի միջև ապրանքաշրջանառության զարգացմանը: Դա իր հերթին կակտիվացնի Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու տարածաշրջանային նշանակությունը:

Այնուամենայնիվ, քանի որ համաշխարհային զարգացման ծանրության կենտրոնը տեղափոխվում է դեպի Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջան, Կենտրոնական Ասիայի աշխարհաքաղաքական կարևորությունը՝ որպես Եվրասիական մայրցամաքի հիմք («*Heartland*»), միայն ավելի կբարձրանա, ինչպես նաև Մոսկվայի ու Պեկինի միջև ավելի կակտիվանա ռազմավարական պայքարը տարածաշրջանում առաջատար դերի համար:

ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ԳԱԶԸ ԵՎ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արմեն Մանվելյան[*]

Էներգետիկ շուկայում իր առանձնահատուկ տեղն ունի գազը, որն, ի տարբերություն մյուս էներգակիրների (նավթ, ածուխ, հարստացված ուրան), չի հանդիսանում բորսայական ապրանք, հետևաբար այդ էներգակրի գինն էլ չի որոշվում ավանդական՝ Լոնդոնի կամ Նյու Յորքի բորսաներում: Գազի շուկայի այս փակ համակարգը որոշակի առավելություն է տալիս արտահանող պետություններին, որոնք կարող են ազդել գնագոյացման քաղաքականության վրա և փորձում են այն օգտագործել որպես միջոց սեփական շահերն առաջ մղելու համար:

Այս համակարգում, սակայն, սկսեց որոշակի փոփոխություն կատարվել, երբ գազի շուկան հարստացավ հեղուկացված գազով (*Liquefied Natural Gas – LNG*), որը մրցակցության մեջ մտավ արդեն ավանդական համարվող խողովակաշարային գազի (*Piped Natural Gas – PNG*) հետ և, կարելի է ասել, մարտահրավեր նետեց այդ շուկայում գերիշխողներին: Այս մրցակցությունը որոշակիորեն փոխեց գազի շուկան՝ թուլացնելով այստեղ ավանդաբար մեծ ազդեցություն ունեցող Ռուսաստանի, Նորվեգիայի և Ալժիրի դիրքերը, որոնք ԵՄ գազի հիմնական արտահանողներն են[1]:

Հեղուկացված գազի պահանջարկի ավելացումը պայմանավորված էր մի քանի հանգամանքով. նախ՝ ավանդական գազի պաշարների արդյունահանման նվազում սկսվեց այդ էներգառեսուրսի նկատմամբ պահանջարկի աճի ֆոնին: Սա, իր հերթին, նպաստեց, որ ԱՄՆ-ում թերթա-

---

[*] ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, էներգետիկ աշխարհաքաղաքականության և միջազգային անվտանգության մասնագետ, պ.գ.թ.:

[1] *Mikkal E. Herberg*, «Introduction», Mikkal E. Herberg, Ed. Energy Security and the Asia-Pacific: Course Reader (Washington DC: National Bureau of Asian Research, 2014).

քարային գազի արդյունահանման ծավալներն աճեն՝ որպես այլընտրանք ավանդական գազի պաշարներին: Այս փոփոխությունների արդյունքում տեղի ունեցավ սպառման հիմնական շուկայի տեղաշարժ՝ Եվրոպայի մայրցամաքից դեպի Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջան:

Չինաստանի տնտեսության աննախադեպ աճը, էներգակիրների սպառման ծավալների մեծացումը Հնդկաստանում, Ինդոնեզիայում, Ճապոնիայում և Հարավային Կորեայում ստիպեցին վերջիններիս ավելի մեծ ուշադրություն դարձնել գազի պաշարների ներմուծման հարցին: Իսկ քանի որ կար դեպի այդ պետություններ գազն արտահանելու ուղիների հարց, վերջիններս սկսեցին ներմուծման համար ավելի շատ կենտրոնանալ գազի հեղուկացված տարբերակի վրա, որի առաքման համար ճանապարհների և ուղիների ընտրության ավելի լայն ու ճկուն հնարավորություններ կան, քան խողովակաշարային առաքման դեպքում:

2000թ. Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում սպառվում էր աշխարհի էներգակիրների ընդամենը 28%-ը, մինչև 2013թ. սպառման ծավալներն աճեցին ամբողջ աշխարհում, սակայն դրա առյուծի բաժինը՝ 76%-ը, տեղի ունեցավ հենց Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում: Չինաստանում էներգակիրների սպառումն այդ ընթացքում եռապատկվեց, Հնդկաստանում կրկնապատկվեց, այն դեպքում, երբ ամբողջ աշխարհում պահանջարկն ավելացավ ընդհանուր առմամբ 36%-ով:

Համաշխարհային էներգետիկ շուկայում սպառվող էներգակիրների 23.7%-ը գազ է: Այս ցուցանիշով այն զիջում է միայն նավթին՝ 35.8% և ածխին՝ 28.4%: Համաձայն միջազգային էներգետիկ գործակալության տվյալների՝ մինչև 2030թ. սպասվում է, որ գազի պահանջարկը կաճի 88%-ով՝ ներկա 2.75 մլրդ մ^3-ից մինչև 5.16 մլրդ մ^3 օրական[2]:

Ասիայում էներգակիրների սպառման ծավալի աճը, պայմանավորված տնտեսական արագացմամբ, կանխատեսելի էր: Հարավասիական այնպիսի պետություններ, ինչպիսիք են Մալայզիան և Ինդոնեզիան, որոնք նախկինում նավթ արդյունահանող պետություններ էին, այժմ ստիպված են այն ներմուծել: Եթե 2002թ. տվյալներով ասիական պետու-

[2] International Energy Agency (IEA), Key world energy statistics 2016 (Paris: IEA, 2016).

թյունները ներմուծում էին իրենց էներգակիրների 10%-ը դրսից, ապա ներկայում այդ թիվը կազմում է 70%:

Ասիական պետություններն իրենց էներգակիրների առյուծի բաժինը ներմուծում են Պարսից ծոցից, լցանավերի միջոցով: Այս առումով ծովային այդ ուղին բախվում է անվտանգության մի շարք խնդիրների, մասնավորապես՝ ծովահենների հարձակումների, Մալակա նեղուցն անցնելու պրոբլեմին, համապատասխան ծավալի նավթա-գազատարների ոչ բավարար քանակին և ծովային երթուղիներում առկա խցանումներին: Բացի այդ, կան հակամարտության շրջաններ Չինական ծովում՝ հարավարևելյան հատվածում Չինաստանի, Վիետնամի և Ֆիլիպինների միջև, սա նույնպես դժվարացնում և ռիսկային է դարձնում ասիական պետություններ գազի և նավթի ներմուծումը Մերձավոր Արևելքից:

Մերձավորարևելյան նավթին և գազին ասիական շուկայում կարող են այլընտրանք լինել ռուսական էներգակիրները: Ռուսաստանը, սակայն, ինչպես հայտնի է, ավանդաբար իր նավթի և գազի մոտ 70%-ը վաճառում է Եվրոպայում: Ներկայում ասիական երկրները տարեկան մոտ 46.8 մլրդ մ^3 գազ ստանում են Պարսից ծոցից, իսկ Ռուսաստանից՝ միայն 16 մլրդ մ^3:

Ինչպես նշեցինք, հեղուկացված գազի շուկայում իրավիճակի փոփոխմանը նպաստում էր նաև ԱՄՆ ոչ ավանդական (*unconventional*) գազի արդյունահանման աճը: 1960-2000թթ. ԱՄՆ-ում ավանդական գազի արդյունահանումը կրճատվեց մեկ երրորդով, ինչը հանգեցրեց գազի գնի աննախադեպ բարձրացման՝ $1.92-ից մինչև $7.33 28.3 մ^3 գազի դիմաց[3]:

Գազի գնի աննախադեպ թանկացումն, իր հերթին, նպաստեց ոչ ավանդական գազի արդյունահանման տեխնոլոգիաների և ռեսուրսների մշակմանը: Սկսեցին ակտիվ կերպով օգտագործել «շերտերի ճեղքման» հորատանցման մեթոդը, որը չնայած շատ ավելի թանկ էր, քան ավանդական հորատանցումը, սակայն գազի բարձր գների պայմաններում արդարացնում էր արված ծախսերը: Թերթաքարային գազի պաշարներ ունեցող պետությունների առաջին տասնյակը հետևյալ տեսքն ունի՝ Չինաստան, Արգենտինա, Ալժիր, ԱՄՆ, Կանադա, Մեքսիկա, Ավստրալիա, Հա-

[3] American Chemistry Council, «Shale Gas and New Petrochemicals Investment: Benefits for the Economy, Jobs, and US Manufacturing», March 2011.

րավային Աֆրիկա, Ռուսաստան, Բրազիլիա: Այս պետությունները միասին վերահսկում են թերթաքարային գազի պաշարների 80%-ը՝ մոտ 26 տրլն մ³ պաշարներ[4]:

Գազի սպառումը միջազգային շուկայում շարունակաբար աճում է. 2025թ. այն կկազմի աշխարհում սպառվող էներգակիրների 30%-ը: Գազի սպառման ընդհանուր շուկայում հեղուկացված գազը 2010թ. զբաղեցնում էր ընդամենը 9%, սպասվում է, որ 2020թ. այն կկազմի արդեն 14%, աճը՝ 61%: Թերթաքարային գազի հեղափոխության շնորհիվ 2015-ից սկսած՝ ԱՄՆ-ը դարձավ գազ արտահանող պետություն: Եթե միջազգային շուկայում 2000թ. վաճառվում էր մոտ 100 տոննա հեղուկացված գազ, ապա 2011թ. այս թիվն աճեց մոտ երկուսուկես անգամ՝ մինչև 242 տոննա տարեկան[5]:

Հեղուկացված գազի արտադրության կտրուկ ավելացումը 2013-2016թթ. հանգեցրեց այդ ապրանքի գնի նվազմանը՝ ԱՄՆ-ում $4.5-ից մինչև $1.9, Եվրոպայում՝ $10.6-ից մինչև $4.2, իսկ Ասիայում՝ $17-ից մինչև $4.4: Ներկայում հեղուկացված գազը կազմում է աշխարհում վաճառվող գազի 10%-ը կամ 332 մլրդ մ³ տարեկան: Հեղուկացված այդ գազի 60%-ը սպառվում է Չինաստանում, Հարավային Կորեայում և Ճապոնիայում: Ըստ որոշ հետազոտությունների՝ 2030թ. հեղուկացված գազի ծավալը կհասնի 680 մլրդ մ³-ի կամ աշխարհում վաճառվող գազի 16%-ին[6]:

Թերթաքարային գազի արդյունահանման ծավալների աննախադեպ աճը ԱՄՆ-ում հանգեցրեց այդ պետության էներգետիկ համակարգի հզորացմանը և այդ ապրանքի՝ գազի արտահանման հնարավորությունների ավելացմանը: Սա որոշակիորեն փոխեց էներգետիկ աշխարհաքաղաքական համակարգը՝ հզորացրեց ԱՄՆ-ը որպես գազ և նավթ արդյունահանող ու արտահանող պետություն:

Ամերիկյան հեղուկացված գազի արդյունահանումը որոշ չափով նվազեց՝ պայմանավորված այդ ապրանքի գնի անկմամբ, շատ ընկերություններ սնանկացան, սակայն նույնիսկ այդ պայմաններում ԱՄՆ-ում դրա արդյունահանումը չդադարեց: Որոշ ժամանակ անց արդյունահան-

[4] US Energy Information Administration (EIA), «Shale in the United States», December 15, 2016.

[5] The Economist, Hub or hubris?: The outlook for natural gas in Asia? May 2013.

[6] Accenture, «Gas grows up, part I: developing new sources of LNG demand», 2016.

ման ծավալները նորից վերականգնվեցին, և ամերիկյան հեղուկացված գազը միջազգային շուկայում սկսեց մրցակցել հիմնական արդյունահանող պետությունների՝ Կատարի և Ավստրալիայի հետ: Այդ մրցակցությունը ծավալվում էր հեղուկացված գազի սպառման հիմնական շուկայում՝ Ասիայում:

Հեղուկացված գազի շուկայի նկատմամբ հետաքրքրությունը պայմանավորված է ընդհանուր առմամբ դանդաղ աճող էներգակիրների սպառման ֆոնին հեղուկացված գազի հանդեպ պահանջարկի կտրուկ աճով: Սպասվում է, որ առաջիկա մի քանի տարիների ընթացքում այդ էներգակրի նկատմամբ պահանջարկը կաճի 50%-ով: 2020թ. հեղուկացված գազի արդյունահանմամբ ԱՄՆ-ը կլինի երրորդը՝ զիջելով միայն Կատարին և Ավստրալիային[7]:

Այսպիսով, հեղուկացված գազի նկատմամբ պահանջարկի աճը և այս գործընթացում ԱՄՆ դերի աճը, որպես այդ ապրանքն արտադրող հիմնական երկրներից մեկը, փոխում է էներգետիկ աշխարհաքաղաքական իրավիճակը: Տեղի է ունենում աշխարհառազմավարական տեղաշարժ՝ գազ արդյունահող մի շարք կենտրոնների, հատկապես Պարսից ծոցի դերի նվազում և ԱՄՆ դերի բարձրացում: Աշխարհառազմավարական երկրորդ փոփոխությունը տեղի է ունենում այդ ապրանքի սպառման շուկայում. եթե նախկինում գազի սպառման ամենամեծ շուկան ԵՄ-ն էր, ապա այսօր այս հարցում առաջատարը Ասիա-խաղաղօվկիանոսյան պետություններն են: Այսինքն՝ մենք ականատեսն ենք էներգետիկ աշխարհաքաղաքական բնապատկերի փոփոխության, որը նոր է սկսվել և որը խորացման ու զարգացման միտում ունի: Կարելի է պնդել, որ էներգետիկ աշխարհառազմավարական այս փոփոխությունները միայն նոր-նոր են սկսվել և հետագայում էլ ավելի կփոխեն էներգետիկ շուկայի այն համակարգը, որը ձևավորվել էր 20-րդ դարում:

[7] *Robert D. Blackwill and Meghan L. O'Sullivan,* «America's Energy Edge: The Geopolitical Consequences of the Shale Revolution», March/April 2014, Foreign Affairs.

ԻՍՐԱՅԵԼԻ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ. ԳԻՏԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Կարեն Վերանյան[*]

Իսրայելի կրիտիկական ենթակառուցվածքները. Իսրայելն այն բացառիկ պետություններից է, որի կրիտիկական ենթակառուցվածքների[1] համակարգն այս կամ այն չափով փոխկապակցված է երկրի, բնակչության անվտանգության, մասնավորապես՝ պաշտպանական անվտանգության ոլորտի հետ: Եվ սա, ըստ էության, բնական գործընթաց պետք է համարել, քանի որ Իսրայել պետությունը 1948թ. հիմնադրումից սկսած մինչև օրս շարունակում է զարգանալ հարևան երկրների և զինյալ խմբավորումների ռազմական սպառնալիքների իրական վտանգի ներքո:

Իսրայելի կրիտիկական ենթակառուցվածքների համակարգը կարելի է դասակարգել մի քանի հիմնական ուղղություններով.

1. *պաշտպանական անվտանգություն*, որը ներառում է թե՛ սահմանային անվտանգության, թե՛ թիկունքի պաշտպանության հարցերը՝ մասնակիորեն ներառվելով «քաղաքացիական պաշտպանություն» հասկացության սահմաններում: Պաշտպանական անվտանգության կրիտիկական ենթակառուցվածքների անքակտելի բաղադրիչներից են Իսրայելի ռազմարդյունաբերական համալիրը և Իսրայելի պաշտպանության բանակը: Ըստ վիճակագրության՝ 2017թ. Իսրայելն արտահանել է $9,2 մլրդ-ի սպառազինություն և ռազմական տեխնիկա, որը կազմում է սպառազինության համաշխարհային արտահանման ծավալների 3%-ը: Ստոկհոլմի խաղաղության միջազգային հետազոտությունների ինստիտուտի (*SIPRI*) տվյալներով՝ 2017թ. սպառազինությունների համաշխարհային արտահանման ծավալներով Իսրա-

[*] «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար:

[1] *Գագիկ Հարությունյան*, «Կրիտիկական ենթակառուցվածքներ և գաղափարախոսություն», «21-րդ ԴԱՐ», թիվ 4 (74), 2017թ., http://www.noravank.am/arm/articles/detail.php/detail.php?ELEMENT_ID=16030

յելը եզրափակում էր առաջատար երկրների հնգյակը՝ զիջելով ԱՄՆ-ին, ՌԴ-ին, Ֆրանսիային և Գերմանիային:

2. Պաշտպանական անվտանգության *ոչ նյութական՝ հոգևոր* կրիտիկական ենթակառուցվածքների համակարգում կարևոր տեղ է զբաղեցնում հրեա զինվորականության բարոյա-հոգևոր դաստիարակությունը՝ համակարգված հրեա զինվորականի վարքականոնով (*The IDF Code of Conduct)*: Վարքականոնը Իսրայելի ԶՈՒ դոկտրինի երկու գլխավոր բաղադրիչներից մեկն է, հայեցակարգը ներկայանում է «Իսրայելի պաշտպանության ուժերի ոգին» խորագրով:
3. *Հրեության հոգևոր ժառանգության պաշտպանությունը (քաղաքակրթական ասպեկտ)[2].* կարելի է առանձնացնել լեզուն՝ եբրայերենը, կրոնը և հրեական ողջ ժառանգությունը: Հրեության և Իսրայել պետության գոյության շարունակականությունն ինքնին, որպես «հրեական առաքելություն», նույնպես դասվում է համայն հրեության և Իսրայելի հոգևոր կրիտիկական ենթակառուցվածքների շարքին:
4. *Երկրի միջուկային-էներգետիկ պոտենցիալը*, ինչը մերձավորարևելյան տարածաշրջանում ուժային հավասարակշռության պահպանման կարևոր երաշխիքներից է: Իսրայելի, նրա բնակչության անվտանգության երաշխիքը հենց երկրի միջուկային բարձր պոտենցիալի առկայությունն է:
5. *Պետություն-սփյուռք փոխգործակցություն (ցանցակենտրոն և միակենտրոն գոյակցման ռազմավարական մոտեցումների փոխլրացմամբ), հայրենադարձության կազմակերպում:*
6. *Կիբեռանվտանգություն, տեղեկատվական-հոգեբանական պատերազմներ:*
7. *Տրանսպորտ, կապ, հեռահաղորդակցություններ*:
8. *Ջրային ռեսուրսներ և դրանց արդյունավետ կառավարում.* երկիրը (հատկապես երկրի հարավային հատվածը), գտնվելով չոր, կիսանապատային բնակլիմայական պայմաններում և ունենալով ջրային սուղ ռեսուրսներ, մեծ ուշադրություն է դարձնում ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման մեխանիզմներին:
9. *Գիտատեխնոլոգիական և մարդկային-մտավոր կապիտալ,* որի առ-

[2] http://www.noravank.am/rus/issues/detail.php?ELEMENT_ID=6516

կայությամբ է պայմանավորված յուրաքանչյուր պետության ռազմական, տնտեսական պոտենցիալը: Գիտատեխնոլոգիական ոլորտը, թերևս, այն անկյունաքարային կրիտիկական ենթակառուցվածքն է, որից ածանցյալ են պետության կրիտիկական ենթակառուցվածքների բոլոր ոլորտները: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ տվյալ դեպքում հենց գիտատեխնոլոգիական բազան է պայմանավորում Իսրայել պետության և համայն հրեության գոյությունն առհասարակ: Ուստի, ելնելով այդ տրամաբանությունից՝ առավել մանրամասն կանդրադառնանք գիտատեխնոլոգիական վիճակագրական և որակական առանձնահատկություններին:

Գիտատեխնոլոգիական սեկտորը՝ որպես առանցքային կրիտիկական ենթակառուցվածք. Վերը հիշատակված կրիտիկական ենթակառուցվածքների գրեթե բոլոր ոլորտներն այս կամ այն աստիճանով փոխկապակցված են Իսրայելի անվտանգային-պաշտպանական համակարգին կամ մասնակիորեն սպասարկում են վերջինին: Առաջին հայացքից, ընդ որում՝ օբյեկտիվորեն, կարող է տպավորություն ստեղծվել, թե պետության և հասարակության գործունեության գրեթե բոլոր ասպարեզները կարող են ուղղվել Իսրայել պետության պաշտպանության համակարգի կատարելագործմանը՝ հանգեցնելով վերոնշյալ բնագավառների մասնակի կամ հատվածային ռազմականացմանը: Չնայած երկիրը գտնվում է մշտական ռազմական սպառնալիքների առջև, թեև գիտատեխնոլոգիական ոլորտն անմիջական ու թիրախային մասնակցություն է ունենում երկրի պաշտպանությանը, այդուհանդերձ, ներկայանում է ոչ թե որպես սոսկ այդ համակարգի բաղադրիչ, այլ ավելի շուտ ինքնակա, ինքնաբավ գործող, պաշտպանական ոլորտին սպասարկող հատված:

Իսրայելի գիտատեխնոլոգիական սեկտորը տեղական և օտարերկրյա ներդրումների համար գրավիչ միջավայր դարձնելու հարցում կարևոր նշանակություն ունեցան օրենսդրական արդյունավետ մեխանիզմները: 1959թ. Իսրայելում ընդունվեց Կապիտալ ներդրումների խթանման մասին օրենքը (*Law for the Encouragement of Capital Investment*), որով կարգավորվում էր Իսրայելի տարածքում գործող ընկերությունների ներդրումային քաղաքականությունը: Առանձնակի ուշադրու-

թյուն է դարձվում այն ընկերություններին, որոնք գործունեություն են իրականացնում բարձր տեխնոլոգիաների, գիտահետազոտական ոլորտներում (մրցունակ միջավայրի ապահովում, արտոնությունների ճկուն համակարգի ընձեռում և այլն)։

1984թ. Իսրայելում ընդունվեց արդյունաբերական նշանակության գիտահետազոտական և փորձարարա-կոնստրուկտորային աշխատանքների (ԳՀՓԿԱ-*НИОКР*) խթանման մասին օրենքը (*Law for the Encouragement of Industrial Research & Development*), որով սահմանվում էին արդյունաբերական ԳՀՓԿԱ զարգացմանն ուղղված պետական աջակցության մեխանիզմները։

Իսրայելի ղեկավարությունն առանձնակի ուշադրություն է դարձնում գիտակրթական, գիտատեխնոլոգիական պոտենցիալի զարգացմանը։ Կրթությանը հատկացվող ֆինանսական ծավալները կազմում են երկրի ՀՆԱ շուրջ 10%-ը։ 2012թ. Իսրայելի պետբյուջեից բարձրագույն կրթությանը տրամադրված միջոցները կազմել են $2 մլրդ։ 2013թ. տվյալներով, երկրի առաջատար համալսարաններից միայն մեկի՝ Երուսաղեմի Հրեական համալսարանի բյուջեն կազմել է $714 մլն, որի 55-65%-ը՝ պետական միջոցների հաշվին։ Երկրի գիտատեխնոլոգիական սեկտորի առաջընթացի ապահովման գործում կարևոր դեր ունի բուհական համակարգն իր գիտահետազոտական արդյունքների «տնտեսականացման» կամ «կապիտալացման» գործառույթներով՝ ձևավորելով կրթություն-գիտություն-տնտեսություն արդյունավետ շղթայական կապը։ Գիտատեխնոլոգիական արդյունքների «կապիտալացման» ցուցանիշով նույնպես Իսրայելն աշխարհում առաջատար դիրքեր է զբաղեցնում։ Բուհերը սերտորեն համագործակցում են երկրի տնտեսության համապատասխան մասնագիտացված ճյուղերի հետ՝ ապահովելով դասախոսա-հետազոտական կազմի՝ որպես համահիմնադիր կամ խորհրդատու, ուղղակի մասնակցությունը «*start-up*»-երին և տեխնոլոգիական նորարարություններին։

ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2012թ. զեկույցի վիճակագրական տվյալներով, գիտության և հետազոտությունների ծախսերի ծավալով Իսրայելն աշխարհում առաջատարն է եղել՝ երկրի ՀՆԱ 4,4%-ը[3] (տե՛ս *Գծապատկեր 1*)։

[3] UNESCO Institute for Statistics, 2012, http://gtmarket.ru/ratings/research-and-development-expenditure/info։ Զեկույցի վիճակագրական տվյալները վերաբերում են 2010-ին։

Գծապատկեր 1

Ըստ գիտահետազոտական ծախսերի ծավալի առաջատար երկրները, ՀՆԱ-ում տոկոսային հաշվարկով, 2015թ.



Աղբյուրը՝ https://knoema.ru/atlas/ranks/Затраты-на-НИОКР-percent-ВВП

Աշխարհի առաջատար երկրներում զգալի ֆինանսական միջոցներ են հատկացվում գիտության և կրթության զարգացմանը: *Industrial Research Institute* և *R&D Magazine* ասմագրի հրապարակած «2018թ. գիտության և հետազոտությունների համաշխարհային կանխատեսումները» (*Global R&D Funding Forecast 2018*) զեկույցում նշվում է, որ վերջին տարիներին համաշխարհային մակարդակով գիտության և հետազոտությունների ֆինանսավորման ծավալներն աճման միտում ունեն: Զեկույցում ներառված են գիտությանը և հետազոտություններին ֆինանսական հատկացումների գծով առաջատար 40 երկրները, որոնց ցուցակը գլխավորում է ԱՄՆ-ը: Զեկույցի 2018թ. կանխատեսումներով, ԱՄՆ գիտության և հետազոտությունների համախառն ներքին ծախսերը (*GERD-Gross Domestic Expenditure on R&D*) կազմելու են $553 մլրդ (ՀՆԱ 2,84%), 2016թ. այդ ցուցանիշը $522 մլրդ էր: 2018թ. զեկույցում Իսրայելը 40 երկրների շարքում զբաղեցնում է 22-րդ դիրքը: Այդ երկրի գիտության և հետազոտությունների համախառն ներքին ծախսերը $12,85 մլրդ են կազմում՝ երկրի ՀՆԱ 3%-ը[4]: Նշենք, որ գիտության և հետազոտությունների համախառն ներքին ծախսերով Իսրայելի վերջին տարիների ցուցանիշ-

[4] http://digital.rdmag.com/researchanddevelopment/2018_global_r_d_funding_forecast?pg=1#pg1

ները կայուն աճման միտում ունեն. եթե 2016թ. այդ երկրի համապատասխան ցուցանիշը կազմել է $12,51 մլրդ, ապա 2017թ.՝ $12,68 մլրդ[5]:

Վերջին տարիների տվյալներով, Իսրայելն աշխարհում բնակչության մեկ շնչին ընկնող հաշվարկով «*start-up*»-երի քանակով զբաղեցնում է երկրորդ հորիզոնականը՝ ստանալով «*Startup-Nation*» բրենդ-անվանումը: 2014թ. իսրայելական «*start-up*» ընկերությունները ապահովեցին շուրջ $3,4 մլրդ ներդրումային ծավալներ, ինչը 46%-ով գերազանցում է 2013թ. համապատասխան արդյունքը: Իսկ 2015թ. դրությամբ այդ ցուցանիշն աճեց ևս 30%-ով, արդյունքում՝ ներդրումների ծավալը կազմեց $4,43 մլրդ (գործարքների ընդհանուր քանակը՝ 708)[6]:

IVC հետազոտական կենտրոնի (*IVC research center*) գնահատմամբ, 2012-2018թթ. Իսրայելի բարձրտեխնոլոգիական կապիտալն (*Israeli Hige-Tech capital*) արձանագրել է արագ աճի դինամիկա: Եթե 2012թ. բարձր տեխնոլոգիաների սեկտորում իրականացվել է 516 գործարք՝ $1.867 մլրդ ընդհանուր ներդրումային ծավալով, իսկ 2015թ.՝ 706 գործարք՝ $4,307 մլրդ ծավալով, ապա 2017թ. գործարկվել է 623 պայմանագիր՝ $5,27 մլրդ ընդհանուր ներդրումային ծավալով (տե՛ս *Գծապատկեր 2*):

Իսրայելի ՀՆԱ ավելի քան 11%-ն ապահովում է բարձրտեխնոլոգիական սեկտորը, այն կազմում է նաև երկրի արտահանման ընդհանուր ծավալի ավելի քան 50%-ը:

Իսրայելի գիտատեխնոլոգիական պոտենցիալը բարձր արդյունքներ է գրանցում նաև միջազգային հեղինակավոր վարկանիշային զեկույցներում: «Գլոբալ նորարարության ինդեքսը» (*Global Innovation index*) 2017թ. զեկույցում, որտեղ չափորոշվում է երկրների նորարարական պոտենցիալը, ներառված 127 երկրների շարքում Իսրայելը զբաղեցրել է 17-րդ դիրքը: Զեկույցում երկրների վարկանիշավորման համար ընտրված ցուցիչները համախմբված են 7 խմբում՝ ինստիտուտներ, մարդկային կապիտալ և հետազոտություններ, ենթակառուցվածքներ, շուկայի արդյունավետություն, գործարար միջավայրի արդյունավետություն, գիտական և տեխնոլոգիական արտադրանք, ստեղծագործական արտադրանք:

[5] Նույն տեղում:

[6] http://www.rosinfocominvest.ru/upload/iblock/419/419e406d2b01ce002862d7df0dbd121e.pdf

Գծապատկեր 2

Իսրայելի բարձրտեխնոլոգիական կապիտալը 2012-2018թթ.



Աղբյուրը՝ http://www.ivc-online.com/Research-Center/IVC-Publications/IVC-Surveys/High-Tech-Capital-Raising

2006թ. լույս տեսավ «Ռենդ» հեղինակավոր կորպորացիայի «Գլոբալ տեխնոլոգիական հեղափոխություն 2020թ.» հետազոտությունը՝ նվիրված աշխարհում գիտատեխնոլոգիական սեկտորի զարգացման հեռանկարներին[7]: Հետազոտությունը հովանավորվել է ԱՄՆ Ազգային հետախուզական խորհրդի (*Nation Intelligence Council-NIC*) կողմից (միջնաժամկետ և երկարաժամկետ ռազմավարական հետազոտություններ իրականացնող վերլուծական կենտրոն է և գործում է ԱՄՆ Հետախուզական հանրույթի (*United States Intelligence Community-IC*)[8] ենթակայության ներքո: Ի դեպ, տվյալ հետազոտական նախագծի իրագործման համար հավելյալ ֆինանսական միջոցներ են հատկացվել նաև ԱՄՆ Հետախուզության նորարարական տեխնոլոգիական կենտրոնի (*Intelligence Technology Innovation Center*) և ԱՄՆ էներգետիկայի դեպարտամենտի

[7] RAND Corporation. http://www.rand.org/pubs/technical_reports/TR303.html, http://www.rand.org/pubs/monographs/MG475.html

[8] ԱՄՆ Հետախուզական հանրույթը ներառում է տեղեկատվության հավաքմամբ զբաղվող և հետախուզական գործունեություն իրականացնող ԱՄՆ 17 առանձին կառավարական հաստատություն:

կողմից։ Եվ այսպես, «Ռենդ» կորպորացիայի փորձագետների կողմից կազմվել է աշխարհի երկրների գիտատեխնոլոգիական պոտենցիալի վարկանիշը 1992-2004թթ. (*Index of Science and Technology Capacity*)։ Մեթոդաբանությունում կիրառվել է 7 չափորոշիչ՝ ՀԱԱ-ն մեկ շնչի հաշվով, 1 մլն բնակչության հաշվով գիտահետազոտական ոլորտի գիտնականների և ինժեներների թվաքանակը, գիտության և տեխնոլոգիաների թեմայով հրատարակված գիտական հոդվածների քանակը, գիտահետազոտական ոլորտի ֆինանսական հատկացումները՝ ՀԱԱ տոկոսային հարաբերակցությամբ, գիտահետազոտական ինստիտուտների թվաքանակը և այլն։ Վարկանիշային հետազոտությունում ներառված 150 երկրների շարքում լավագույն արդյունքը ԱՄՆ-ինն է՝ 5,03 ամփոփ միավոր, որին հաջորդում են Ճապոնիան (3,08) և Գերմանիան (2,12)։ Լավագույն տասնյակը եզրափակում է Իսրայելը՝ 1,53 միավոր։

Ի դեպ, 2017թ. աշնանը Իսրայելի կառավարություն էր ներկայացվել 2017-2022թթ. ազգային ենթակառուցվածքների զարգացման հայեցակարգ-նախագիծ, որն առանձնանում է գործունեության լայնընդգրկուն դաշտով և խոշոր ֆինանսական միջոցներով։ Հայեցակարգի շրջանակներում մշակված նախագծերը նախատեսվում է ուղղել տրանսպորտի, էներգետիկայի, կրթության, գյուղատնտեսության և այլ ոլորտների ենթակառուցվածքների զարգացմանը։ Ազգային ենթակառուցվածքների հայեցակարգում ներառվել է 147 նախագիծ (63-ը՝ տրանսպորտի և կապի ենթակառուցվածքների ոլորտում)՝ շուրջ $34,4 մլրդ (1$ = 3.575 շեկել) ընդհանուր ներդրումային ծավալով։

ԱՄՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՈՐՈՇ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Վահրամ Հովյան[*]

ԱՄՆ-ը տնտեսական զարգացման առումով աշխարհում առաջին երկիրն է: Եվ պատահական չէ, որ այստեղ գործունեություն են ծավալում մեծ թվով հայ գործարարներ: ԱՄՆ-ում է գտնվում նաև հայկական նշանավոր բարեգործական կազմակերպությունների գերակշիռ մեծամասնությունը:

Անհատ հայ մեծահարուստ գործարարներից արժե հիշատակել լուսահոգի Ալեք Մանուկյանին («Մասկո» ընկերության[1] նախագահ, ՀԲԸՄ երկարատև (1953-1989թթ.) նախագահ), Քըրք Քրքորյանին (մահացել է 2015թ.), Ավո Ուվեզյանին (սիգարի արքա, մահացել է 2017թ.):

Ներկայի գործարարներից կարելի է հիշատակել, օրինակ, Անդրանիկ Բաղդասարյանին, որը 2016թ. նոյեմբերին «Հայաստան» համահայկական հիմնադրամի ամենամյա հեռուստամարաթոնին կատարեց ամենամեծ նվիրատվությունը՝ $5 մլն՝ դրանով իսկ դառնալով հիմնադրամի պատմության մեջ երրորդ խոշոր նվիրատուն Քըրք Քրքորյանից և Սամվել Կարապետյանից հետո[2]: Առհասարակ, ԱՄՆ հայ համայնքի տնտեսական ներուժը հաշվի առնելով է, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի ամենամյա հեռուստամարաթոնները, որպես կանոն, 1996-ից ի վեր անց են կացվում Լոս Անջելեսում:

---

[*] «Նորավանք» ԳԿՀ Գիտական-փորձագիտական խորհրդի քարտուղար, Հայագիտական կենտրոնի ավագ փորձագետ:

[1] Ընկերությունը մասնագիտացած է ավտոմեքենաների համար սարքավորումների արտադրության բնագավառում:

[2] Անդրանիկ Բաղդասարյան, «Հայաստան» համահայկական հիմնադրամի երրորդ խոշոր նվիրատուն. Արտակ Հերիքյան, http://www.arevelk.am/am/content/10/240/Անդրանիկ-Բաղդասարյան՝-«Հայաստան»-համահայկական-հիմնադրամի-երրորդ-խոշոր-նվիրատուն.Արտակ-Հերիքյան.html

Գործարարության ասպարեզում նշանակալի են նաև Նուբար Աֆեյանը, Քերոլին Ռաֆայելյանը (ոսկերչական ոլորտ), Միքայել Սահակյանը (*MISHO Consulting*-ի սեփականատեր), Ալեքսիս Գևորգյանը (անշարժ գույքի ոլորտ, «*AMG & Associates*» ընկերության ղեկավար), Մեթ Բերթելզյանը (*Volo LLC* ընկերության զարգացման տնօրեն), Մայք Սարյանը (համաամերիկյան հիվանդանոցների ցանցի նախագահ), Դենի Թարկանյանը (գործարար և քաղաքական գործիչ), Ասո Թավիթյանը (գործարար և բարերար, «Թավիթյան» հիմնադրամի հիմնադիր, նախագահ), Սերոբ Դեմերջյանը, Նազ Աթիքյանը, Զարեհ Իսախանյանը և շատ ուրիշներ[3]:

Ինչ վերաբերում է բարեգործական կազմակերպություններին, ապա ԱՄՆ-ում են գտնվում հայկական խոշորագույն բարեգործական կառույցների՝ ՀԲԸՄ-ի, Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության, Հայ օգնության միության, Հայ օգնության ֆոնդի, Հովարդ Կարագյոզյան հաստատության, Միացյալ հայկական ֆոնդի, Ջինիշյան հիշատակի հիմնադրամի, Փիլիպոսյան հիմնադրամի կենտրոնական ղեկավար մարմինները:

Հիշյալ բարեգործական կազմակերպություններն իրենց գործունեությունը ծավալում են համազգային մակարդակով՝ ինչպես Հայաստանում (ՀՀ և ԼՂՀ), այնպես էլ Սփյուռքում: Սփյուռքի ամենահին և ամենախոշոր բարեգործական կազմակերպությունը՝ ՀԲԸՄ-ն, միակ սփյուռքյան կառույցն էր, որ մինչև 1937թ. օրինական գործունեություն ծավալելու իրավունք է ունեցել Խորհրդային Հայաստանում: Այնքան մեծ էր ՀԲԸՄ դերը հայության կյանքում, որ անգամ հայրենիքում վերջինիս գործունեության դադարեցումից հետո էլ խորհրդային իշանությունները շարունակեցին համագործակցել նրա հետ: Մասնավորապես՝ ՀԲԸՄ-ն է հանգանակությունների միջոցով ապահովել 1946-1948թթ. մեծ հայրենադարձության դրամական միջոցների հիմնական մասը[4]: 1991թ. Հայաստանի անկախացումից հետո, երբ նոր հորիզոններ բացվեցին հայրենիքում

[3] Ամերիկահայ համայնքի տնտեսական ներուժը Հայաստանի զարգացմանն ուղղորդելու, ինչպես նաև հայ-ամերիկյան տնտեսական կապերի աշխուժացմանը նպաստելու համար գործում է Հայ-ամերիկյան գործարարության խորհուրդը (Armenian-American Business Council – AABC, www.armenianbusinesscouncil.com):

[4] Մանրամասն տե՛ս *Մելքոնյան Էդ.,* Հայկական բարեգործական ընդհանուր միությունը 1946-1948թթ. հայրենադարձության գործընթացում, «1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., Լիմուշ, 2009, էջ 60-68:

սփյուռքյան կառույցների գործունեության համար, ՀԲԸՄ-ն նոր թափով սկսեց իրականացնել տարբեր ծրագրեր սոցիալական, գիտակրթական[5], մշակութային և այլ բնագավառներում, ինչը շարունակվում է առայսօր: Օրինակ՝ սիրիական ճգնաժամի առաջացումից ի վեր, 2016թ. դեկտեմբերի դրությամբ այն Հայաստանում գործող «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համատեղ իրականացրել է 96 ծրագիր[6]:

Մյուս կառույցներից, օրինակ, Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցությունը նույնպես սիրիական պատերազմի սկզբից ի վեր ավելի քան $2 մլն է հատկացրել ինչպես սիրիահայ համայնքին, այնպես էլ Հայաստան տեղափոխված սիրիահայերին օժանդակելու նպատակով[7]: Նմանատիպ գործունեություն է ծավալել նաև Հայ օգնության միությունը (ՀՕՄ)[8]: Վերոհիշյալ կազմակերպություններն իրենց մասնաճյուղերն ունեն ինչպես Սփյուռքի տարբեր համայնքներում, այնպես էլ ՀՀ-ում և ԼՂՀ-ում:

Վերոհիշյալ կազմակերպությունների կողքին կան նաև այնպիսիք, որոնք իրենց գործունեությունը ծավալում են միայն Սփյուռքի այս կամ այն համայնքում, կամ էլ Հայաստանում: Առաջին խմբի կառույցներից նշանակալի է Սիրիահայերի օգնության հիմնադրամը (*Syrian Armenian Relief Fund - SURF*), որը ստեղծվել է սիրիական ճգնաժամի առաջացումից հետո, և որի նպատակն է աջակցությունն այդ երկրի հայությանը: 2016թ. հիմնադրամն ի նպաստ Հալեպի հայ համայնքի փոխանցել է շուրջ $800 հազ.[9]:

Իսկ այն կազմակերպությունները, որոնք, ստեղծված լինելով ԱՄՆ-ում, իրենց գործունեությունը տարածում են հատուկ Հայաստանի վրա, ունեն որոշակի ուղղվածություն՝ բնապահպանական, առողջապահա-

[5] Գիտակրթական ոլորտում ՀԲԸՄ իրականացրած ծրագրերի մասին մանրամասն տե՛ս, օրինակ, *Հովյան Վ.*, Սփյուռքի ներդրումը Հայաստանի գիտական համակարգի զարգացման գործում, Գլոբուս, 2015, թիվ 6, էջ 45-46:

[6] ՀՀ Սփիւռքի Նախարար Հրանոյշ Յակոբեան «Վահէ Կարապետեան» Կեդրոնին Մէջ Մասնակցեցաւ Քլաուտիա Նազարեանի Անունը Կրող Բժշկական Կեդրոնի Բացման Արարողութեան, http://hayernaysor.am/cl/archives/224389

[7] Տե՛ս «Հայ Ավետարանչական ընկերակցությունը շարունակելու է տարբեր ծրագրերով աջակցել սիրիահայերին». Հարութ Ներսեսյան, http://hayernaysor.am/archives/222777

[8] «ՀՕՄ-ը Սիրիայի հայ համայնքի պահպանման հիմնական դերակատարներից մեկն է դարձել». Դիանա Հովսեփյան, http://hayernaysor.am/archives/223067

[9] Տե՛ս Սիրիահայերի օգնության հիմնադրամը 100.000 դոլար է փոխանցել Հալեպի հայ համայնքին, http://hayernaysor.am/archives/225806

կան, կրթական և այլն: *Բնապահպանական* կազմակերպություններից նշանավոր է «Հայաստան Ծառատունկ Ծրագիրը» (*Armenian Tree Project – ATP*), որի նպատակն է նպաստել Հայաստանի անտառային ֆոնդի վերականգնմանը:

Առողջապահական ոլորտի կազմակերպություններից հիշատակելի է հատկապես «Հայկական աչքի պահպանման նախագիծը» (*Armenian EyeCare Project*)[10], որի նպատակն է անվճար բժշկական սպասարկում իրականացնել տեսողական խնդիրներ ունեցող հայաստանցիների համար: Նախագիծը շրջիկ հիվանդանոցի միջոցով, որը զինված է ակնաբուժական արդիական սարքավորումներով, Հայաստանի մարզերում բժշկական օգնություն է ցուցաբերել հազարավոր սոցիալապես անապահով մարդկանց[11]: Ստեղծված լինելով 1992թ.՝ նախագիծն իր գործունեության 25 տարիների ընթացքում հսկայական դեր է խաղացել սոցիալապես անապահով խավին պատկանող հայաստանցիների տեսողական խնդիրների լուծման, մասնավորապես՝ մանկական կուրության կանխարգելման գործում:

Բացի տեսողական խնդիրներ ունեցող հայերին աջակցելուց, նախագիծը նպաստել է նաև ակնաբուժության ոլորտի զարգացմանը Հայաստանում՝ հովանավորելով հայաստանցի ակնաբույժների վերապատրաստումը ԱՄՆ առաջնակարգ կլինիկաներում[12] և աջակցելով Հայաստանի մարզերում ակնաբուժական կլինիկաների զարգացմանը: Նախագիծն իր առջև խնդիր է դրել Հայաստանի 5 մարզերում՝ Տավուշում (Իջևան), Լոռիում (Սպիտակ), Շիրակում (Գյումրի), Վայոց ձորում (Եղեգնաձոր) և Սյունիքում (Կապան), որտեղ առավել մեծ չափով կա դրա կարիքը, բացել ակնաբուժական կլինիկաներ, որոնք հագեցած կլինեն ոլորտի նորագույն տեխնոլոգիաներով, ինչպես նաև հեռահաղորդակցային սարքավորումներով, որոնք թույլ կտան մարզային ակնաբույժներին անհրաժեշտության դեպքում կապվել երևանյան կլինիկաների հետ ու խորհրդատվություն ստանալ մայրաքաղաքի իրենց գործընկերներից:

[10] Հայտնի է նաև «Լույս հայի աչքերին» («Bringing Sight to Armenian Eyes)» անվամբ:
[11] Տե՛ս Mobile Eye Hospital: What weighs 14 tons and restores eyesight?, https://eyecareproject.com/video/mobile-eye-hospital/
[12] Armenian EyeCare Project Kicks Off 25th Anniversary, http://en.hayernaysor.am/english-armenian-eyecare-project-kicks-off-25th-anniversary/

Իջևանի և Սպիտակի կլինիկաներն արդեն բացվել են համապատասխանաբար 2015թ. և 2016թ.[13]: 2017թ. բացվել է Կապանի կլինիկան:

Հատկապես հիշատակելի է Մանկական կուրության կանխարգելման գերազանցության կենտրոնի հիմնումը Երևանում 2012թ., ինչը հեղափոխական նշանակություն ունեցավ այս ոլորտի զարգացման համար: Կենտրոնի ստեղծումն ունեցավ ոչ միայն առողջապահական, այլև որոշակի տնտեսական նշանակություն Հայաստանի համար՝ վերջինս վերածելով մանկական ակնաբուժության միջազգային կենտրոնի, քանի որ դրանից հետո ոչ միայն հայ ծնողները ստիպված չեն իրենց երեխաներին տանել արտասահման՝ բուժման, այլև արտասահմանյան երկրներից են այդ նպատակով գալիս Հայաստան[14]:

Բացի *Armenian EyeCare Project*-ից, կան նաև այլ կազմակերպություններ, որոնք Հայաստանի տարբեր շրջաններում բժշկական օգնություն են ցուցաբերում բնակչությանը: Այդպիսի օգնություն ցուցաբերվում է Գլենդելի ադվենթիստական բժշկական կենտրոնի (*Glendale Adventist Medical Center*) և «Հայաստան» համահայկական հիմնադրամի ԱՄՆ Արևմտյան տարածաշրջանի գրասենյակի համագործակցությամբ: 2016թ. հոկտեմբերի 13-20-ը բազմապրոֆիլ օգնություն է ցուցաբերվել սահմանային Նոյեմբերյանի շրջանի բնակչությանը[15]:

Կրթական ոլորտում նշանակալի գործունեություն է ծավալում «Թավիթյան» հիմնադրամը[16], որը չորս մասնագիտություններով ֆինանսավորում է ՀՀ պետական ծառայողների ուսումը (վերապատրաստումը, մասնագիտական կատարելագործումը) ԱՄՆ Թաֆթս համալսարանի Ֆլեթչերի Իրավունքի և դիվանագիտության դպրոցում: Առայսօր շուրջ 300 պետական ծառայող Հայաստանից ուսում է ստացել այդ դպրոցում:

[13] Տե՛ս Regional Eye Clinics: Five Clinics for $5 Million, https://eyecareproject.com/video/5-million-for-5-aecp-regional-clinics/

[14] Տե՛ս Center of Excellence for the Prevention of Childhood Blindness: Saving Thousands of Babies from Blindness, https://eyecareproject.com/video/center-of-excellence-i/

[15] Տե՛ս Armenia Fund, Glendale Adventist Conclude Successful 2nd Mission to Armenia, http://en.hayernaysor.am/english-armenia-fund-glendale-adventist-conclude-successful-2nd-mission-to-armenia/

[16] Հիմնադրամի հիմնադիր նախագահն է ամերիկահայ գործարար և բարերար Ասո Թավիթյանը:

ԲԱՆԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿԸ

Խաչատուր Խաչատրյան[*], *Մարատ Բաղդասարյան*[**]

Բանակաշինության եվրոպական մոդելները ժամանակակից մարտահրավերների ներգործությամբ շարունակ տրանսֆորմացիայի են ենթարկվում: Եվ կառավարման համակարգի արդյունավետությունը դառնում է այն հզոր ցուցիչը, որը բնութագրում է տվյալ հասարակական-քաղաքական, նաև ռազմական համակարգի առջև ծառացած հիմնախնդիրների հաղթահարման, որակական նոր հորիզոնների հասնելու կարողությունները, գլոբալիզացիայի և տարածաշրջանային սպառնալիքներին առաջանցիկ տեմպերով դիմակայելու ունակություններն ու հնարավորությունները:

Այս տեսանկյունից դիտարկելով բանակաշինության եվրոպական և մեր տարածաշրջանային գործընթացները՝ վերջինիս դեպքում ակնհայտ է դառնում հարկադրված լինելու, առաջացած անկանխատեսելի իրավիճակներից ելնելով գործելու, քաղաքական վայրիվերումների և ժամանակի զարգացումներով թելադրված պահանջներով առաջնորդվելու սկզբունքը: Լարված իրավիճակներով և Ադրբեջանի կողմից հայոց անկախությանն ու ինքնորոշմանն ուղղված մշտական սպառնալիքներով պայմանավորված՝ հայոց բանակաշինությունն առանձնահատուկ ձևով և բովանդակությամբ է զարգանում:

Որպես կանոն, եվրոպական բանակաշինության յուրաքանչյուր մոդել, այդ թվում նաև Գերմանիայի Դաշնային Հանրապետության մոդելը, ունի բավական ուշագրավ կողմեր:

---

[*] Գնդապետ, Վ.Սարգսյանի անվան ռազմական համալսարանի պետի առաջին տեղակալ:

[**] Փոխգնդապետ, Վ.Սարգսյանի անվան ռազմական համալսարանի ստորաբաժանումների ամենօրյա ղեկավարման և ռազմահրավական պատրաստության ամբիոնի ռազմական մանկավարժության և հոգեբանության ցիկլի պետ:

Զինվորական ծառայության, սպառազինության և ռազմական տեխնիկայի շարունակական զարգացումն ու կատարելագործումը զինվորական ղեկավարից, հրամանատարից պահանջում են առավել բարձրացնել ներքին կառավարման արդյունավետությունը, ավելի ուժեղ և հմուտ դարձնել ենթակա անձնակազմին, որակական նոր աստիճանի հասցնել նրանց մարտական պատրաստությունը:

Ահա այս՝ ներքին կառավարման արդյունավետության բարձրացման խնդիրն աչքի առաջ ունենալով էլ ուսումնասիրվել է ԳԴՀ բանակաշինության մոդելը: Նկատենք, որ այդ երկիրն անցյալ դարի առաջին կեսին երկու անգամ սանձազերծած համաշխարհային պատերազմներում ջախջախիչ պարտություններ կրելուց հետո շատ կարճ ժամանակահատվածում կարողացավ ոչ միայն ոտքի կանգնել, այլև դառնալ աշխարհի գերհզոր տերություններից մեկն՝ իր ինքնատիպ բանակով հանդերձ:

1950-ին ընդունված Հուշագիրը հիմք դարձավ նոր պահանջներով բանակի ստեղծման համար, որում առանցքային դեր են ստանձնում «Այլևս երբեք» սկզբունքի հետևյալ կետերը.

1. ապառազմականացում (դեմիլիտարիզացիա),
2. ապազգայնացում (դենացիֆիկացիա),
3. ժողովրդավարացում (դեմոկրատացում),
4. ապարդյունաբերականացում (դեինդուստրացում):

Այս պարագայում բանակի ձևավորման և զարգացման առաջնահերթ և հիմնական գործոններ են դառնում կրթությունը, կրոնի մատչելի դասավանդումը, աշխարհագրական դիրքը, երբ այս երկիրը սահմանակից է ոչ պակաս զարգացած այնպիսի պետություններին, ինչպիսիք են Դանիան, Նիդեռլանդները, Բելգիան, Լյուքսեմբուրգը, Ֆրանսիան, Շվեյցարիան, Ավստրիան, Չեխիան, Լեհաստանը (մեծ նշանակություն ունեն նաև Հյուսիսային և Բալթիկ ծովեր ելքի և խիտ ու ջրառատ գետային ցանցի առկայությունը, հզոր կոմունիկացիոն համակարգերով պատված լինելը), կարգապահությունը, կայունությունը:

1950թ. զինված ուժերի վերստեղծման թեման սոցիալ-հասարակական հարաբերությունների համակարգում լայն քննարկման առարկա

դարձնելով՝ դրան զուգահեռ առաջ էին տանում մի գաղափար, որ այդ ոլորտում պետք է լիներ քաղաքականության գերակայությունը: Բնականաբար, ոչ վաղ անցյալի դառը պատմությունը պարտադրում էր մի պայման, որ զինված ուժերը «Այլևս երբեք» չպետք է դառնան քաղաքականության ձեռքի խաղալիք:

Նոր աշխարհաքաղաքական զարգացումների ֆոնին վերածնվող երկրի նորովի կազմակերպվող և բանակաշինության գործընթացների անկյունաքար դարձան չորս պայման-պահանջներ.

1. Զինված ուժերի հրամանատարը պետք է լինի քաղաքացիական անձ:
2. Գերմանական խորհրդարանը պետք է կազմավորի հանձնաժողով բանակի հարցերը կարգավորելու համար:
3. Խորհրդարանն է որոշում բանակի ֆինանսական միջոցների ծավալը:
4. Որպես առանձին կառույց ստեղծել բանակը վերահսկող հանձնակատարի գրասենյակ:

Հետագայում, ընդօրինակելով ԳԴՀ-ում հաջողությամբ գործող գրասենյակի կառուցվածքն ու կազմակերպական առանձնահատկությունները և տեղայնացնելով այն՝ այսօր նմանատիպ մոդել է կիրառվում նաև Բոսնիա-Հերցեգովինայում:

Որքան էլ գործի իրավական դաշտում ընդունելի զինծառայության վերաբերյալ օրենքների պարտադրանքը, այնուամենայնիվ, գործընթացների շարժիչ ուժը, առանցքը մնում է սոցիալական, հասարակական անհատն իր հարուստ ու խորապես անճանաչելի ներաշխարհով: Եվ վերջինիս ներուժն ու պոտենցիալ կարողությունները ծառայությանն անհրաժեշտ ուղղությամբ տանելուն է ծառայեցվում բարեվարքության նորմերի, կանոնների ողջ համակարգը:

Նշված համակարգերի հիմքը կազմել ու կազմում է կարգապահական օրենքը, ըստ որի էլ կառուցվել է զինվորական կյանքի բոլոր ոլորտներն ընդգրկող «ներքին կարգը»: Ասել է թե՝ ինչպես անել, որ.

- զինվորները լավագույնս պատրաստված լինեն, տիրապետեն արտակարգ իրավիճակներում ճիշտ ինքնադրսևորմանը,

- հիմնավորված լինեն ընտրության և գործողությունների դրդապատճառները, մոտիվացիան:

Զինվորական ծառայության արդյունավետությանն ուղղված նմանատիպ ըմբռնումները դարձել են ԳԴՀ ինչպես Շտրաուսբերգի, այնպես էլ Բեռլինի վերապատրաստման մշտական դասընթացների առանցքային դիրքորոշումների հիմքը: Ավելին, ուսումնական գործընթացի պարտադիր մասն է կազմում ծրագրի 50%-ը զբաղեցնող զինծառայողների քաղաքագիտական կրթությունը: Այսպիսի մոտեցումը դասընթացներին պայմանավորված է երկու նպատակադրությամբ.

1. ներկայացնել, թե պետությունը՝ որպես քաղաքական կառույց, ինչպես է գործում: Այս տեսանկյունից ելնելով՝ ընդգծվում է այն մոտեցումը, որ իրենք չեն էլ սպասում, թե բոլոր զինծառայողները պետական կառավարման յուրաքանչյուր և բոլոր քայլերի հետ համաձայն լինեն: Միանշանակ ընդունում են տարակարծությունը;
2. զինծառայողներին հաղորդել, փոխանցել ավելի խորացված գիտելիքներ: Միտումը ոչ թե պարզապես նոր գիտելիքների չոր ու մեխանիկական փոխանցումն է, այլ մատուցվող գիտելիքներով ունկնդրին օգնելը, աջակցելը՝ հետագա քայլերը կատարելու իր իսկ տրամաբանական որոշմամբ:

Այս նկատառումով էլ յուրաքանչյուր զորատեսակ տարեկան երեք օր հատկացնում է զինծառայողների քաղաքագիտական կրթությանը: Ընդ որում, թեմաների ընտրությունը վերապահվում է ստորաբաժանումների հրամանատարներին, որոնց որոշմամբ էլ յուրաքանչյուր վաշտ տարվա ընթացքում առնվազն մեկ անգամ մասնակցում է նմանատիպ սեմինարների: Իսկ այդպիսի դասընթացներն անցկացվում են տարեկան 40 անգամ:

Վերջիններս պարտադիր գործընթացներ են դարձել նաև միջազգային և երկկողմանի համագործակցության շրջանակներում, որոնց նպատակներն են.

1. ճանաչել ընդհանրությունները և հասկանալ տարբերությունները,

2. խթանել «ներքին կառավարման» ընկալումը:

Ահա այս նպատակներից ելնելով էլ, ինչպես ՆԱՏՕ, այնպես էլ երկկողմ համագործակցության շրջանակներում իրականացվում են ծրագրեր հինգ ուղղություններով: Դրանք են.

ա. զինվորական կրթության օգնություն,

բ. երկկողմանի տարեկան ծրագրերի իրագործում,

գ. զինվորական խորհրդատուներ,

դ. կրթական աջակցություն,

ե. սպառազինության օգնություն (խորհրդատուների խմբեր):

Դասընթացներում բեռնվածության նման ծավալը, իրենց իսկ գնահատմամբ, հնարավորություն է տալիս խթանել զինծառայողի քաղաքական խնդիրների գիտակցման ունակությունը, կատարելագործել քաղաքական դատողունակությունը, քաջալերել պատմաքաղաքական բանավեճերի անցկացումը:

Բանակը, պարտադիր զինծառայության վերացման պարագայում, համալրվելով հասարակության տարաբնույթ սոցիալական հանրույթները ներկայացնող անհատներով, չի կարող վերածվել այդ նույն հասարակությունից դուրս գործող անբովանդակ կառույցի: Այն իր մեջ է կլանում ողջ հասարակական-քաղաքական կյանքի ներկապնակը, որում չափազանց մեծ դերակատարում է վերապահվում կարգին ու կարգապահությանը: Սակայն «կարգ» հասկացությունը, ասոցացնելով նախկինում այլ ընկալումների հետ, գիտակցաբար փոխարինել են «ներքին առաջնորդում» եզրույթով:

Անվանափոխություններն, իհարկե, բանակային գործընթացների թե՛ որակի և թե՛ նպատակադրությունների վրա էական ազդեցություն չեն թողել: Բայցևայնպես, շեշտադրվել է առաջնորդի, ղեկավարի դերը զինվորական կարգապահության (հասկացության լայն ընդգրկմամբ) կատարելագործման հարցում:

Զինվորական ծառայության ընթացքում հրամանատարական և կառավարման համակարգում ընդգրկված ցանկացած սպա, ինքնին, որոշա-

կի իրավասությամբ օժտված ղեկավար է: Սակայն խնդիրն այստեղ ինչպիսի ղեկավար լինելու որակական դրսևորումներին ու գնահատականներին է առնչվում:

Այս պրիզմայով դիտարկելիս, ի տարբերություն քաղաքացիական համակարգերի, այդ սպան *ղեկավարում* է սահմանադրորեն գործող կառույց՝ զինվորական ստորաբաժանում, զորամաս կամ զորամիավորում՝ իր ինքնատիպ անձնակազմով, մարտական խնդիրներով, բարոյական ու մարտական ավանդույթներով, ամենօրյա ծառայողական գործունեության առանձնահատկություններով, մարտական պատրաստության աստիճանով: Եվ այս ամենում իր ինքնատիպ դերակատարումն ունի բազմաֆունկցիոնալ կապերի և միջանձնային փոխհարաբերությունների բազմաբևեռ համակարգը: Ահա թե ինչու առաջնորդման, ղեկավարման *արվեստը* չի կարող սահմանափակվել միայն օրենքի աստիճանի բարձրացված համազորային կանոնադրություններով: Ինդուկտիվորեն դրանց պարտադիր ավելանում են ոչ պակաս կարևոր հոգեբանական, բարոյական, իմաստասիրական, մանկավարժական հարուստ գիտելիքներն ու դրանց արհեստավարժ գործադրումը:

Զինվորական համակարգում առաջադրված մարտական խնդրի բնույթից և բովանդակությունից ու ակնկալվելիք ելքի համար անհրաժեշտ պատասխանատվությունից տրամաբանական է դառնում կառավարման միանձնյա ոճի գերակայությունը, ի հակադրություն դեմոկրատականի և լիբերալի:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության (որը բարիդրացիական հարաբերություններ ունի եվրոպական հարևան երկրների հետ) պարագայում բանակի առջև ծառացած խնդիրները և դրանցում իրականացվող գործընթացներն ու զարգացման դինամիկան չեն կարող համեմատվել հայկականի հետ:

Այստեղից հետևում է, որ բանակաշինության և ներքին կառավարման գործառույթները Գերմանիայում բավական ինքնատիպ դրսևորումներ ունեն: Եվ, որպես կանոն, դրանց վերահսկողությամբ զբաղվում է բանակի հարցերով հանձնակատարի գրասենյակը: Այսինքն՝ այդ գրասենյակը.

1. ծավալում է վերահսկողական գործունեություն,
2. այն հարթակ է, որին կարող է դիմել ցանկացած զինծառայող իրեն անհանգստացնող խնդիրների և բողոքների դեպքում:

Առաջին գործառույթի դեպքում վերահսկողությունն արտացոլվում է տեղեկություններ ստանալու և զորամասեր այցելելու անսահմանափակ իրավունքով:

Ամրագրված այս իրավունքներն անգամ ունեն իրենց սահմանափակումները՝ պայմանավորված կոնկրետ զինծառայողի անձով և պետական անվտանգությամբ: Մասնավորապես, համապատասխան տեղեկությունը ստանալու համար անհրաժեշտ է զինծառայողի համաձայնությունը, եթե խնդրո առարկա է դարձել զինծառայողի առողջությունը; եթե հարցը վերաբերում է պետական նշանակություն ունեցող հույժ գաղտնի տեղեկություններին:

Բանակի հարցերով հանձնակատարը վերահսկողական գործառույթների շրջանակներում իրավասու է տարեկան 40-50 անգամ, առանց զգուշացնելու, այցելել մշտական տեղակայման վայրերում տեղաբաշխված զորամասեր և արտասահմանյան երկրներում տարբեր առաքելություններ իրականացնող զորախմբեր:

Հանդիպումների ժամանակ քննարկման առարկա են դառնում ոչ միայն նախապես պլանավորված խնդիրները, այլև չնախատեսված հարցերը: Իսկ դրանք կարող են առնչվել զինվորական ծառայության բոլոր կողմերին: Ընդ որում, յուրաքանչյուր զինծառայող կարող է դիմել հանձնակատարին ինչպես հանդիպումների ժամանակ, այնպես էլ փոստով: Այս դեպքում գործող միակ պայմանն այն է, որ ցանկացած դիմում-բողոք անանուն չպետք է լինի, այն պետք է լինի կոնկրետ, հասցեական: Ավելին, օրենքով արգելված է դիմում-բողոք ներկայացրած զինծառայողին դրա հետ կապված որևէ կերպ նեղացնելը, որևէ կերպ պատասխանատվության ենթարկելը:

«ԳԼՈԲՈՒՍ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 20.06.2018թ.
Թիվ 5 (94), 2018թ.
Տպաքանակը՝ 150։

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 4 մամուլ։ Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Հայկարլի» ՍՊԸ տպարանում